# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ   N 75-Ա**

<<30>> մայիսի 2024 թվական                    քաղաք  Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.976224 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ  ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության ,օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում   է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով **0.976224** հեկտար հողամաս (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս, Վկայական N 17052024-08-0044) օտարել աճուրդով՝ այդ հողամասում հանքակոյաճի և քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու համար:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ- 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Մ. ԵՆՈՔՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<30>> մայիսի 2024 թ
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2024 թվականի
մայիսի 30-ի թիվ 75-Ա որոշման

**Աճուրդով օտարվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները**

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, Վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտ-ների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%) | Աճուրդի մասնակցի գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին | 08-013-0101-0004 N 17052024-08-0044 | 0.976224 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական | ընդերքի օգտագործման համար տրամադրված | Հանքակողաճի և քարի վերամշակման արտադրություն | չկան | Բաց մրցույթ | 1 420 000 | 110.0 | 1 524 862 | 50.0 | 5.0 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս | | | նշանակության օբյեկտների | | կազմակերպելու համար | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ